

րունդ: Նոր տվյալները հնարավորություն են ընծեռում լրացնելու այս արգասավոր նախարարական տան բազմաճյուղ տոհմագրությունը՝ այն հասցնելով 12 սերնդի՝ շուրջ 400 տարիա ընթացքում: Մակար այս դեպքում ևս այն հեռու է ամրողական պատկերը տալուց: Մկրտչադրյուրներում քանից հիշատակվում են Սարգիս, Յասան, Մարծան, Մամիկոն, Վարդան և այլ Մամիկոնյաններ, որոնց փոխկապերը չեն պարզվուն, և այս ուղղությամբ պետք է լուրջ հետագոտություններ կատարվեն:

Իսկ Դսեղում շարունակվում էր կյամբը, գործում էին հոգեոր կենտրոնները: 1652 թ. Սարգիս արքեպիսկոպոսի առաջնորդության ժամանակ, մումանի որդի Սարգիս քահանան նորոգում է մի «Ավետարան» «ի տանս Տաշրու, ի յերկիրս Հօռու... ի դուռն Ս. Լուսաւորչին, ի գիւղաքաղաքն Դսեղու»:<sup>75</sup>

### ԲԱՐՁՐԱՔՆԵՒ ՎԱՆԵ

Վանքի անվան կապակցությամբ Յ. Ոսկյանը գրում է. «Բարձրաքաշ անունը կամ յորջորջանքը, որ կը մնայ մեկնութեան կարօտ – մի՞քև Բարձրէն տեսնուող եւ իրեն քաշող թէ սրտերը դեպի վեր ու բարձր տանող ու քաշող»,<sup>76</sup> որով փորձում է կապել Երկնային ուժերի՝ աստծոն հետ:

Թերևս տարակուսանքի հարկ չկա. Բարձրաքաշ է կոչվել գյուղի նկատմանք ունեցած դիրքի պատճառով. հարթավայրից ցած, քաշ, ներքև՝ դեռևս ժ. դ. կառուցված Եկեղեցու տեղը մատնանշելու ծգտումով: Բարձրաքաշը դարձել է տեղանուն:

Յևմագասպյան-Մամիկոնյանների ծեռնարկած ամենանշանակոր շինարարական գործը, անշուշտ, Բարձրաքաշի սուրբ Գրիգոր վանքի կառուցումն էր, որը դարձավ Երկրի հոգեոր-մշակութային կարևոր կենտրոններից մեկը ու տոհմական դամբարան՝ թեկուզ ցայծն հայտնի չէ, թե նրանցից ով է թաղվել այնտեղ:

Վիմագիր արձանագրություններում և ծեռագրաց հիշատակարաններում հոգեոր այս կենտրոնը կրում է վանք, սուրբ ուխտ, տուն, Բարձրաքաշ, Բարձրաքաշի սուրբ ուխտ և սքանչելագործ սուրբ Գրիգոր,<sup>77</sup> Բարձրաքաշի սուրբ Գրիգոր վանք անունները:

Բարձրաքաշի վանքը հիմնարկվել է Բագրատունյաց թագավորության ժամանակ՝ չնայած այդ մասին պատճական տեղեկություններ չկան մեր ծեռքի տակ: Ելելով համալիրի հյուսիսային միանակ սրահի ճարտարապետաշինարարական յուրահատկություններից (հատկապես բեմին կից Երկարավուն ուղղանկյուն խորանները), այն կարելի է վերագրել Թ-Ժ դարերին:<sup>78</sup> Բայց իբրև վանական հաստատություն կառուցապատվելամբողացվել և կանոնավոր գործունեություն է ծավալել Մամիկոնյանների հշխանության ընթացքում, ու այդ ժամանակ էլ հոգեոր-մշակութային այս կենտրոնին շնորհվել է սքանչելագործ սուրբ Գրիգոր անունը՝ մեծ քահանայապետի մասունքներն այնտեղ ամփոփելու պատրվակով:<sup>79</sup>

<sup>75</sup> Յայերեն ծեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հ. Գ., էջ 491:

<sup>76</sup> Յ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, էջ 18:

<sup>77</sup> Վերջին անունն է կրում նաև գյուղամիջյան քանից վերաշնված Եկեղեցին:

<sup>78</sup> Դեղի ճարտարապետական կորողների նկարագրությունն ու վերլուծությունը տրված է Գ. Ծախսյանի «Լոռի» աշխատության 36-41 էջերում: Լալայանը շփոթել է այս Եկեղեցին Ս. Յարությունի հետ, և ժամանակը, հայտնի չէ ինչից ելելով, համարել է ՈԾԴ - 1205 թ. (Ազգ. հանդ., լ. VIII, էջ 423):

<sup>79</sup> Ծեռագրաց հիշատակարանների գրիչները Լուսավորչին մեծարությ են «Սքանչելագործ սուրբ Գրիգոր» հերցորդումով, որին չպիտի շփոթել այդ պատվանունին արժանացած քրիստոնյա առաջին հայերից մեկի՝ Գրիգոր Սքանչելագործ Սյուսացու (Նիկիա) հետ:

Վանքի և Սամիկոնյանների պատմությանն աղերսվող մի «Ավետարանի» հիշատակարանում ասված է «Արդ, ես ծառայ քրիստոսի և աղախին անպիտան Դամայս՝ դրւստր Սամիկոնին, որ ոչ դուստր ունեի և ոչ որոի, յիշեցի զիմ մահին աւրն և զահեղ դատաստանն քրիստոսի և արարի զինծ յիշատակ արձան և զնեցի ի հալալ արդենց իմոց զսուրբ և զիոգելից և զաստուածային տառս՝ զսուրբ զԱւետարանս. և տվի Բարձրաքաջիս սուրբ ուխտին և սքանչելագործ Սուրբ Գրիգորին և ի ծեռն սուրբ և աստուածայնան հայրապետին տեր Կահանայ, և սուրբ ընդուլ միայբանիցն, յառաջնորդութեան սուրբ ուխտին տեր Կահանայ...»<sup>80</sup> ԺԳ դարի հիշատակարանների ստվար ժողովածուն կազմող բազմաջան Արտաշես Մաքոսյանը անթվակիր այս հիշատակարանը իրավացիորեն տեղադրել է ԺԳ դ. Վերջերի գործերի շարքում: Մինչդեռ Բարձրաքաջի տեղը չիմացող Հ. Ուկյանն այս վավերագրից հանգել է միանգամայն սխալ հետևության՝ վանահայր Վահանին նույնացնելով Վահան Սյունեցի կաթողիկոսին (968-969): Իամապատասխան հետևություններով:<sup>81</sup> «Ավետարանը» հալալ արդինց գնող Դամայն պատմական հայտնի դեմք է, դուստրը Մամիկոն գորապետի, որը 1272 թ կանգնեցրել է Վեդի գետի ակունքում Ամենափրկիչ խաչքարը (այժմ՝ Էջմիածնում): Դամայի Եղբայր Վարդանն էլ պատվիրատուն է Սիրուն խաչի: Այնպես որ, Վահան կաթողիկոսի մասին խոսք լինել չի կարող: Ինչ մնում է անզավակ մնալու հարուցած մորմորին ու սրտազեղ հոգեկան մելամաղձին (որ ոչ դուստր ունեի և ոչ որդի, յիշեցի զիմ մահին աւրն...), ապա դա տարածված էր և մատենագրության մեջ, և վիմագրերում (Խզահատ. Դսեղ): Անհիմն պետք է համարել նաև վանքի փլատակները մաքրող և վիմագրերը հրատարակող Գեղամ Սարգսյանի Ենթադրությունը, թե «Բարձրաքաջի հուշարձանները... երկար կյանք չեն ունեցել և քանդվել են դեռևս ԺԳ դարում»<sup>82</sup> որի ապացույց է փնտրում Վերջին թվագիր արձանագրությունը (1250) և ընդամենը երեք վանահայրերի առկայությունը: Սակայն սա աղբյուրների վատ իմացության հետևանք է: Զիս – 1491 թ «ի ցավալից և տրտմազգեաց» ժամանակ, քրիստոսությունը որդի Յովիաննեսը (Յովիանէս): «զի ոչ ունեի մարմնաւոր զաւակ և յիշատակ՝ ոչ որդի և ոչ դուստր», «հալալ ընչից և վաստակոց» յուր գնում է մի «Աւետարան» ու այն, իր և հարազատների հիշատակի ակնկալիքով, նվիրում «առաջնորդ և լուսարար սուրբ Քառասնիցս և սուրբ Գրիգորիս Յովիանէս Վարդապետ»-ին:<sup>83</sup> Ինչպես Բարձրաքաջը, այնպես էլ Քառասնիցը գործել են առնվազն մինչև ԺԳ Վերջը, իսկ վանահայրերից հայտնի են ոչ թե Երեքը, այլ Վեցը, որոնց մասին ունենք հավաստի տվյալներ: Դրանցից առաջինը Տիրացու Վարդապետն է (1216-1250), Դակորը (աթոռակից), ապա Երեմիան (1250-1256), Գորգը (1256), Տեր Վահանը (ԺԳ դ. Վերջ), Յովիաննեսը (1491) և Սարգիս արքեպիսկոպոսը (1652), իսկ արանքներում Եղածներն ու հաջորդները դեռ ի հայտ կցան:

**Միանալ դահլիճ (Դիս Եկեղեցի):** Ինչպես ասվեց Վերևում, սա վանքի հնագույն շինությունն է, առանց գմբեթի, իսկ թաղն ու պատերի վերին շարքերը (որոնք չունեն մնացած շենքերի արվեստն ու գրավչությունը)՝ փլատակ են: Արևելյան պատի արձանագրությունները նվիրատվական են, որոնցից մեկը հաստատության հնագույն վավերագիրն է (1213):

<sup>80</sup> Դայերեն ծեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա.Ս. Մաքոսյան, Երևան, 1984, էջ 204:

<sup>81</sup> Հ. Ուկյան, նշվ. աշխ., էջ 12:

<sup>82</sup> Գ. Սարգսյան, «Բարձրաքաջ» վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1951, 7-8, էջ 61:

<sup>83</sup> ԺԵ դարի հայերեն ծեռագրերի հիշատակարաններ, մասն Երրորդ, կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 165-166:

**Ս. Աստվածածին Եկեղեցի.** Գրականության մեջ հայտնի է նաև Մեծ Եկեղեցի, Ա. Գրիգոր անուններով: Այն կցարկված է Դին Եկեղեցուն հարավից և հաղորդակցվուն ենուն պատից բացիւած լրոնով: Ու թե Երկնալաց բնրուկն ու բաղածածկերը կործանված են, ավերված է պատերի գցալի մասը, այս վիճակուն անգամ ցնցող տպավորություն է բողոքում: Նարեգա-տորոնագույն քարերի գերող հնայրը, նիակտոր բազմահատ սյուները, ասեղնագործ խոյակները ու բարամշակման նորությունը, ճարտարապետության, ճարտարագիտության և արվեստի խորաբափանց համադրությունը հիացմունք ու գարմանք են հարուցում:

Բարձրաբարաջ վանքի Ս. Աստվածածին Եկեղեցու հարավային պատի (արտաքուստ) արձանագրության հակասումամբ, բուին ՈՉ – 1221... յիշխանութեան Մեծի հւանեի արարակին... ես՝ Մարգարին, որդի Մարգարի, բոռն Դամազասպեանց, յազգէ Մամիկոնեանց, սկսա շինել գԲարձրաբաշ վանք եւ գերեզմանատեղ... և ապա թվարկուն են նվիրատվությունները, հասուցման պատարագները. ինչպես և վճուախախտողների հանդեպ անեծքի բանաձևումը:

Պարզ է, ուրեմն, որ Բարձրաբաշ վայրուն 1221 թ. Մարգարանը սկսել է շինել վանք, տվյալ պարագայում՝ Ս. Աստվածածին Եկեղեցին: Իսկ, ե՞րբ է ավարտվել այն՝ հայտնի չէ: Վստահաբար պետք է ընդունել, որ շինարարանվիրատվական սույն արձանագրությունը փորագրվել է աշխատանքներն ավարտվելուց հետո, ոչ կառուցման ընթացքուն, որն անկարելի ու անիմաստ էր, և դրանուն մատնացուցվել է սկիզբը և այն, որ դա տեղի է ունեցել յիշխանութեան Մեծի հւանեի արարակին: Բայց ահա, երբ Եկեղեցուն հարավից կցվել է ժամատուն, արձանագրությունը ժամկետը է վերջինիս պատով, ուստի այն կորստյան չղատապարտելու խելամտությամբ, Մարգարանի հարազատները վերափորագրել են գավթի պատին՝ կատարելով խմբագրական միջամտություններ: Այս դեպքում «մոռացվել» է գերազույն իշխանապետին արժանավայել Մեծ տիտղոսը (յիշխանութեան արարակ հւանեի), և դա այն պատճառով, որ Եկեղեցու նավակատիքի ժամանակ Իվանեն դեռևս կենդանի էր, տարեգրության մեջ նա մեծարվել է ըստ պատշաճի, որը հնարավոր չէր զանց առնել, իսկ գավթի հանդիսության ընթացքուն նա արդեն մահացած էր շուրջ 20 տարի առաջ (1227 թ.):

Ակներև է, որ Բարձրաբաշի Ս. Աստվածածին Եկեղեցու կառուցումն սկսվել է 1221 թ. և ավարտվել Իվանե արարակի կենդանության ժամանակ, 1227 թ. ոչ ուշ,<sup>34</sup> և այդ վերջնատարում էլ փորագրվել է շինարարանվիրատվական արձանագրություն:

**Գավթի.** Իբրև կառագ. գավթիները կցարկվել են գլխավոր Եկեղեցիներին արևմուտքից, սակայն Բարձրաբաշի գավթը տեղադրված է միաշար 3 կառուցմերի հարավային եզրում: Ավելի քան 160 քմ մակերեսով այս շենքը, սկզբունքորեն հարելով լայն տարածում ստացած քառամույթ հորինվածքներին, միաժամանակ հագեցած է ընդգծված յուրահատկություններով. արևմյան եզրանկյուններուն ունի փոքրիկ խորաններ. պատի միջնամասում խորաններից լրիվ զատկած, որմածքից դուրս շեշտված կիսաբոլոր բեմ (նախնական մուտքի տեղում): Եվ, որ կարևոր է, խախտված է արևելք-արևմուտք զգածության սկզբունքը՝ շենքին տալով հարավ-հյուսիս ուղղորդում. Երկար կողմը դարձ-

<sup>34</sup> Նկատի ունենանք, որ նման ծավալի շենքի կառուցման համար 5-6 տարի ժամանակը միանգամայն բավարար էր: Այսպես, Դովիաննավանքի Ս. Կարապետ Եկեղեցին. որի բարձրությունը 36 մ է. կառուցվել է 1216-1221 թթ. ընթացքում:

Նելով լայնականը, որի հետևանքով այն ընկալվում է ոչ թե իբրև աղոթատուն, այլ շքեղ հանդիսասրահ:

Գավթի արևելյան լուսամուտից վեր, ճակտոնաթիվերի տակ, գաղը ճանկերում երկալիսանի արծվաքանդակն է (ինչպես և գյուղամիջի եկեղեցու հին մասի վրա), որն ընդունված է իբրև Մամիկոնյանների գինանշան:<sup>85</sup>

Թե երբ է հիմնադրվել գավթը՝ տեղեկացնում է 1969 թ. պեղումների ընթացքում հայտնաբերված մի արծանագրություն, ըստ որի, ի ժամանակի, յորում տիրեց թաթարն չորից ծագած երկրի . . . սկիզբն շինութեան տանս եղեւ: Ստույգ հայտնի է, որ Գուգարքը (Լոռե բերդաքաղաքը) թաթարները նվաճել են 1236 թ. հունիսի 30-ին, հետևաբար Բարձրաքաջի վանքի գավթի շինարարությունն սկսվել է 1236 թ. մայիս-հունիս ամիսներին: Իսկ թե ո՞ւմ կողմից՝ չի նշված: Բայց քանի որ այդ ժամանակ եռանդուն գործունեությամբ աշքի էին ընկնում Մարծավանի որդիներ Ասլանբեկն ու Գրիգորը, ինչպես և Գորգի տղա Աշոտը, ուստի նրանց էլ պիտի վերագրել այս գործի պատիվը, որոնց առնչումների մասին կան մի շարք արծանագրություններ: Ակտիվ մասնակցություն են ցուցաբերել կանայք:

Դատելով արծանագրությունների անուղղակի տեղեկատվությունից, գավթի կառուցումն ավարտվել է 1246-1247 թք.:

Բարձրաքաջի վանքը հարուստ է դարաշրջանին բնորոշ հարդարանքի ճոխ տարրերով և այս առումով պատվավոր տեղ ունի Հարիճավանքի, Մակարավանքի, Նոր Վարագավանքի, Ղեղծուտի, Գանձասարի, Խորակերտի վանքերի փայլուն համաստեղության բույլում:

**Ս. Հարություն մատուոը (Ագռավի տապան)** գտնվում է Սիրուն Խաչից վանք տանող ուսնուորու միջնամասում: ճարտարապետական ճևերով հարուստ է Հարբատի եռախորան հուշարձանին, ուր փոքրիկ խորանածն կառույցի վրա տեղադրված է եղել խաչքար: Այն շինվել է 1234 թ. ի բարեխաւսութիւն վարդապետին Յովանիսի . . . յիշխանութեան Մեծին Մարծավանա:

Ս. Հարությունից հեռու չեն 1266 թ. Գորգ Վարդապետի միջոցներով, Մարծավանի<sup>86</sup> որդիներ Վահրամի և Մամիկոնի պարոնության ժամանակ շինված ծիրիանի ավերակները:

### ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԿԱՆՔ

Գտնվում է Ղսեղից արևմուտք, լեռնապարի տակ, Ղեբեղի աջափնյա լանջի վերին եզրում, Տախտ (թախտ, տափարակ) վայրում: Բանավոր խոսքում և գրականության մեջ գործածական է Քառասնից վանք, Քառասնից մանկանց վանք անվանումը, իսկ վիմագիր արծանագրություններում՝ վանք, սուրբ ուխտ, եկեղեցի, սուրբ Քառասնիցս, անգամ՝ սուրբ Քառասունքս:

Վանքի վիմագրերում հաճախ է վկայվում զամեն եկեղեցիքս արտահայտությունը, որը խոսում է այնտեղ մեկից ավելի աղոթարան լինելու մասին, թեև տեղում այժմ մեկն է պահպանվում՝ ժգ դարում կառուցվածը: 912 թ. գրված «ճառընտիրի» հիշատակարանի

<sup>85</sup> Գաղը մագիլների մեջ արծվաքանդակի խմբապատկերը մեզ մոտ հանդիս է եկել Ժ դարում (Մնի. Ցաղաց քար, Խորանաշատ, Գեղարդ, Եղվարդ, Նորավանք). բայց բոլոր դեպքերում թույլաները միագլուխ են:

<sup>86</sup> Այս Մարծավանը, ակներևաբար, վանքը կառուցող Մեծ Մարծավանը չէ, որը չի ունեցել Վահրամ անունով որդի: